

Նոյեմբերի 22, Երևան

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փոխըմբռնման հուշագրի ստորագրում «Այբ» կրթական հիմնադրամի և Հայաստանի մանուկներ հիմնադրամի միջև

Նոյեմբերի 23-ին՝ ժամը 11:30-ին, «Այբ» կրթական հիմնադրամը և Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում (Թբիլիսյան խճ. 11/11, Երևան) կստորագրեն փոխըմբռնման հուշագիր:

Հուշագիրը կստորագրվի երկու հիմնադրամների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում, մասնավորապես՝ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Արարատյան բակալավրիատ» հայալեզու և միջազգայնորեն ճանաչված ծրագրի և շահառու համայնքներում Հայաստանի մանուկներ հիմնադրամի կողմից իրականացվող կրթական ծրագրերի:

«Այբ» կրթական հիմնադրամի անունից հուշագիրը կստորագրի **գործադիր տնօրեն Սոնա Կոչեցյանը**, իսկ Հայաստանի մանուկներ հիմնադրամի անունից՝ **գործադիր տնօրենի պաշտոնակատար Իննեսա Գրիգորյանը**:

Հուշագրի ստորագրմանը ներկա կլինեն Կրթության գերազանցության ազգային ծրագրի տնօրեն **Տ. Մեսրոպ քհն. Արամյանը** և Հայաստանի մանուկներ հիմնադրամի հիմնադիր և խորհրդի ատենապետ, դոկտոր **Գարո Արմենը**:

Սիրով հրավիրում ենք լուսաբանելու միջոցառումը: